ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 194 – Ա **18 մայիսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25 - Ի N 44 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սանոսյան Գնել - ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Բուդումյան Խաչատուր - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Ղուրշուդյան Մարատ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետ
Գասպարյան Սևակ	- մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի պետի տեղակալ
Մելքոնյան Սաշա	- «Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ի ղեկավար /համաձայնությամբ/
Հազեյան Նորիկ	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության Կոտայքի և Գեղարքունիքի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների, դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2001 թվականի սեպտեմբերի 4-ի N 109-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44–Ա կարգադրությունը:

18.05.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ